## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

*Հոկտեմբերի 9-ին, երկուշաբթի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի պատվիրակությունը, ներկա լինելու Ազգային-եկեղեցական ժողովի առթիվ կազմակերպված եկեղեցական հանդիսություններին։*

*Պատգամավորությանը գլխավորում էր Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Էկումենիկ գործողության բաժնի տնօրեն, Հնդիկ*

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Էկումենիկ գործողության բաժնի տնօրեն Հայր Պոլ Վիգեսիե (կենտրոնում) Մայր Աթոռում Տ. Հայկազուն (ձախից), Տ. Զգոն և Տ. Ասողիկ սրբազանների հետ

Մալարար եկեղեցու քահանա Հայր Պոլ Վիգեզին։

Պատգամավորության կազմում էին եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Միջեկեղեցական և տարագիրների նպաստի բաժնի ղեկավար Մ. Ս. Քինկը, Միջազգային հարցերի հանձնաժողովի քարտուղար Ֆրեդերիկ Մեկերդը և Տեղեկատու բաժնի վարիչ Ջոն Թեյլորը։

Հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Երևանի ոդանավակայանում հյուրերին դիմավորեցին հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը և հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսյանը։

Հյուրերին Վեհարանում ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։

Նորին Ս. Օծության և եկեղեցիների Համաշխարհային խորհրդի պատվիրակների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, մտերմական մթնոլորտում։

Այնուհետև հյուրերն այցելեցին Մայր Տաճար, Ս. Հռիփսիմե, Զվարթնոց և Երևանի տեսարժան վայրերը։

Հաջորդ օրերին հյուրերն այցելեցին Գառնի և Ս. Գեղարդի վանքը։

Հոկտեմբերի 14-ին պատվիրակները ներկա եղան Մայր Տաճարում եպիսկոպոսական ձեռնադրության։

Երեկոյան ժամը 4-ին, Վեհարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը բարեհաճեց հյուրերի պատվին կազմակերպել ընդունելություն, որն անցավ սրտագին մթնոլորտում։ Ընդունելության ընթացքում փոխանակվեցին ողջույնի ջերմ խոսքեր և ճառեր։

Հոկտեմբերի 15-ին, երկուշաբթի, հյուրերը, հրաժեշտ առնելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից, մեկնեցին անմոռանալի տպավորություններով։